ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2025թ. № 334

ԱԼԲԵՐՏ ԳԵՎՈՐԳԻ ԱՊԻՐԿՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ՌԱԶՄԻԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ՌԱԴԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԱՊՐԻԿՅԱՆԻՆ ԵՎ ՌՈԲԵՐՏ ԱԼԲԵՐՏԻ ԱՊՐԻԿՅԱՆԻՆ ՀՈՂԻ (ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ) ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածով, հիմք ընդունելով տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքները, հաշվի առնելով, որ Ալբերտ Գևորգի Ապիրկյանը, Արմենուհի Ռազմիկի Ղազարյանը, Ռադիկ Ալբերտի Ապրիկյանը և Ռոբերտ Ալբերտի Ապրիկյանը, հանդիսանալով հողի (անշարժ գույքի) հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չեն կատարել իրենց ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 06-052-0120-0021, 06-052-0079-0004, 06-052-0129-0012 և 06-052-0102-0019 կադաստրային ծածկագրերով հողամասերի 2008-ից 2024 թվականների հողի (անշարժ գույքի) հարկը վճարելու պարտավորությունը՝ ***որոշում եմ.***

1. Ալբերտ Գևորգի Ապիրկյանից, Արմենուհի Ռազմիկի Ղազարյանից, Ռադիկ Ալբերտի Ապրիկյանից և Ռոբերտ Ալբերտի Ապրիկյանից հօգուտ Սպիտակ համայնքի գանձել **երկու հարյուր ութսունյոթ հազար ութ հարյուր յոթանասունութ** ՀՀ դրամ, որից՝

1) 06-052-0120-0021 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **հարյուր ութ հազար յոթ հարյուր յոթանասունհինգ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **վաթսունութ հազար յոթանասունինը** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **քառասուն հազար վեց հարյուր իններսունվեց** ՀՀ դրամ.

2) 06-052-0079-0004 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **տասնմեկ հազար երկու հարյուր վաթսունմեկ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **հինգ հազար հինգ հարյուր վաթսունութ** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **հինգ հազար երեք հարյուր տասը** ՀՀ դրամ.

3) 06-052-0129-0012 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **ութսուն ինը հազար ութ հարյուր յոթ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **հիսունյոթ հազար հարյուր քսան չորս** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **երեսուն երկու հազար վեց հարյուր ութսուներեք** ՀՀ դրամ.

4) 06-052-0102-0019 կադաստրային ծածկագրով հողամասի հողի (անշարժ գույքի) հարկ՝ **յոթանասուութ հազար երեսունհինգ** ՀՀ դրամ, որից ապառք՝ **քառասունհինգ հազար ինը հարյուր քառասուներկու** ՀՀ դրամ և օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացած տույժ՝ **երեսուներկու հազար իննսուն երեք** ՀՀ դրամ:

2. Սույն որոշման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում իրազեկել Ալբերտ Գևորգի Ապիրկյանին, Արմենուհի Ռազմիկի Ղազարյանին, Ռադիկ Ալբերտի Ապրիկյանին և Ռոբերտ Ալբերտի Ապրիկյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սպիտակ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն որոշման պահանջը չկատարելու դեպքում, այն ենթակա է կատարման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք. Սպիտակ